ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ` khachpar.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 22

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի № 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի № 8 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

2.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափը սահմանելու մասին

3. «ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի «Ծիծեռնակ» մսուր – մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2017 թվականին գանձվող ծնողական վճարների դրույքաչափ սահմանելու մասին

4. 2017 թվականի համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին

5. 2017 թվականի համար համայնքապետարանի աշխատակազմի և «ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ(7)	Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ		
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ		
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ		
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ		
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդփողոցթիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 23-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակներն ու դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

գ.1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50 000 դրամ

դ. 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 դրամ:

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3 000 դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝5 000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառական նշանակության փոփոխություն՝3 000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «1» կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «1» կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5 000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ,

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30 000 դրամ:

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25 000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12 000 դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00–ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70 000 դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300 000 դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 000 դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ,

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանել տեղական տուրք՝ 250 դրամ:

10. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքային բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 100 դրամ՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 2 000 դրամ:

12. Խաչփար համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ,

13. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5 000 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ:

15. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել.

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

16. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 2 000 դրամ:

17. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 1 000 դրամ:

18. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար գանձել 1 000 դրամ:

19. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանության վճարը կենցաղային աղբի համար սահմանել համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 դրամ:

20.Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլատրման վճարը սահմանել՝ 2 000 դրամ:

21. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ:

22. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանել տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր:

23. 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություններ չեն կարող կատարվել:

24.Տեղական տուրքերը և վճարները ճիշտ հաշվարկելու, ժամանակին գանձելու պատասխանատվությունը դնել հաշվետար – գանձապահի վրա:

25. Տեղական տուրքերը և վճարները հաշվարկելու և գանձելու կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդփողոցթիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ` khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 24 -Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն № 1 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 1

Խաչփար համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 24-ի № 24-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՉԱՓԵՐԻ

1.Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզիԽաչփարի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառումը և չափերը:

2.Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստճան:

3.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել տոկոսային ավելացում 5%-ի չափով:

4.Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարել աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՈԱՖԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդփողոցթիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 25-Ն

«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ–ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

«ՀՀ Արարատի մարզի Խաչփար համայնքի «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2017 թվականին գանձվող ծնողական վճարների դրույքաչափը սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսական 5 000 դրամ:

Կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԽԱՉՓԱՐՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ` khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 26 -Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2017 թվականի համար սահմանել 270.0 հազար դրամ:

Կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ` khachpar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» նոյեմբերի 2016 թվականի № 27-Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ –Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Խաչփարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի և «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2 - ի:

Կողմ (7) դեմ (0) ձեռնպահ (0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված1

Խաչփար համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 24-ի N 27-Ն որոշումների

ԽԱՉՓԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 9

2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱ ՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազար դրամ)
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	168.0
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆՊԱՇՏՈՆՆԵՐ		
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	168.0
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	158.0
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	140.0
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	118.0
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	116.0
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Գրադարանավար	1	95.0
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ		
Հավաքարար	1	72.8
Պահակ	1	90.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 2

Խաչփար համայնքի ավագանու

2016 թվականի նոյեմբերի 24-ի № 27-Ն որոշման

ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցներիքանակը՝ 7

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (հազար դրամ)
Տնօրեն	1	130.0
Դաստիարակ	1	119.5
Դաստիարակի օգնական	1	90.0
Հաշվապահ	1	78.0
Խոհարար	1	78.0
Դայակ	1	78.0
Պահակ	1	72.8

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ